ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

10 ՀՈՒԼԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

10 ՀՈՒԼԻՍԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Ամալյա Գրիգորյանը, Ռոբերտ Դերմոյանը, Վարդան Խաչատրյանը, Անդրանիկ Կիրակոսյանը, Արաքսյա Համբարձումյանը, Գարիկ Համբարձումյանը, Կարեն Ղազարյանը, Արտավազդ Մարգարյանը, Արթուր Մկրտչյանը, Մարիամ Նիկոլյանը, Արտյոմ Պետրոսյանը, Սյուզաննա Սայադյանը, Արամ Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Հրայր Հակոբջանյան, Հրաչյա Հովհաննիսյան, Վարդան Հակոբյան, Խորեն Ուստյան, Ատոմ Ատոմյան, Գոհար Հովսեփյան, Զարեհ Հակոբջանյան, Արարատ Գոլեցյան, Արսեն Եփրեմյան, Կարեն Պողոսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գոռ Նազարյանը

Լսեցին
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 10-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1.1. ԱՐՏԱՇԱՏ-ԿԼԱՄԱՐ ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԵՀ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

1.2. ԱՐԱՐԱՏ ԳՈԼԵՑՅԱՆԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԳՈԼԵՑՅԱՆ/

1.3. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.4. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱ «ԱՐՏԱՇԱՏ-ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.5. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.6. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 138-Ա/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ -ԿԼԱՄԱՐ ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԵՀ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Վավերացնել Հայաստանի Հանրապետության Արտաշատ համայնքի և Ֆրանսիայի Հանրապետության Կլամար քաղաքի միջև 2023-2026 թվականների ընթացքում ապակենտրոնացված համագործակցության վերաբերյալ կնքված համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 139-Ա/

Լսեցին
ԱՐԱՐԱՏ ԳՈԼԵՑՅԱՆԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԳՈԼԵՑՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 102-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ, 22-րդ, 24-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Լիազորել Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Արարատ Ռազմիկի Գոլեցյանին (անձնագիր՝ AR 0683703, տրված՝ 08.05.2018թ.-ին, 027-կողմից, հաշվառված՝ ՀՀ, Արարատի մարզ, Արտաշատ քաղաք, Մարքսի 3 շ. բն. 3) որպես Արտաշատ համայնքի ավագանու ներկայացուցիչ, հանդես գալու բոլոր պետական և ոչ պետական մարմիններում, Հայաստանի Հանրապետության դատական բոլոր ատյաններում, մասնակցելու դատական նիստերին, ներկայացնելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր և կատարելու դատավարական ցանկացած գործողություն՝ այդ թվում հայցադիմումը ստորագրելու, միջնորդություն, առարկություն, ապացույց ներկայացնելու, հայցապահանջներից ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվելու, հայցապահանջներն ամբողջովին կամ մասնակիորեն ընդունելու, հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոխելու, հաշտության համաձայնություն կնքելու, կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմում ներկայացնելու և կատարելու ցանկացած այլ դատավարական գործողություն:

2. Լիազորագիրը տրվում է 1 /մեկ/ տարի ժամկետով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 140-Ա/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 06-ի «Արտաշատ համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 276-Ա որոշման 11-րդ հավելվածում 14-րդ տողի լրացմամբ կատարված փոփոխությունը՝ Արարատի մարզի Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանի և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 14.04.2023 թվականին կնքված «ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/27» ծածկագրով Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն գույքի ձեռքբերմամբ (աղբատար մեքենա, մոդելը՝ ZZ1257N4347E1, արժեքը՝ 39.165.000 (երեսունինը միլիոն հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ):

2. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 06-ի «Արտաշատ համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 276-Ա որոշման 11-րդ հավելվածում 15-րդ տողի լրացմամբ կատարված փոփոխությունը՝ Արարատի մարզի Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանի և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 14.04.2023 թվականին կնքված «ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/27» ծածկագրով Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն գույքի ձեռքբերմամբ (աղբատար մեքենա, մոդելը՝ ZZ1257N4347E1, արժեքը՝ 39.165.000 (երեսունինը միլիոն հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ):

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 141-Ա/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱ «ԱՐՏԱՇԱՏ-ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 102-րդ հոդվածով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող թվով երկու աղբատար մեքենա (մոդելը՝ ZZ1257N4347E1, մեկ միավորի արժեքը՝ 39.165.000/երեսունինը միլիոն հարյուր վաթսունհինգ հազար/ՀՀ դրամ) տրամադրել «Արտաշատ-կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ին՝ անժամկետ, անհատույց օգտագործման:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 142-Ա/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 20.06.2023 թվականի 01//03693-2023 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Համաձայնել 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Արտաշատ համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն կից ներկայացվող 22 և 22ա ձևերի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 143-Ա/

Լսեցին
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի N 431-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ և 13-րդ կետերով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 21/06/2023 թվականի N01//03715-2023 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Համաձայնել 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Արտաշատ համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը՝ համաձայն կից հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 144-Ա/

Ավագանու անդամներ

ԱՆԻ ԱԶԱՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԱՇԻԿՅԱՆ

ՀԵՐՄՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ՈՍԿԱՆՅԱՆ

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ **Գոռ Նազարյանը**_____